

րը, բացայայտորէն արտայայտուած նպատակն էր «Միացեալ-Իսլամի» ընդդիմադիր պայքարը Ռուսերուն դէմ\* : Ան կը պատրաստուէր յառաջիկայ յեղափոխութեան միջոցին, որ այն ատեն կը նախատեսուէր արդէն, ստանձնել թուրանական ժողովուրդներու քաղաքական առաջնորդութիւնը : Շնորհիւ այս Բիւրոյին, երբ ծագեցաւ Ռուս Յեղափոխութիւնը, Մարտ 1917-ին, «Իսլամը» իր պատնէշին վրայ էր արդէն : (Տե՛ս Altdorfferի վերոյիշեալ յօդուածը, նաեւ Der Neue Orient Band I, Heft 3, էջեր 115 եւ 122) :

**ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԵՆԷՆ ՅԵՏՈՅ**

Յեղափոխութեան սկիզբէն եւեթ «բուրժուական» թէ «ընկերվարական» թրջութիւնը կեցաւ ազգայնական հողի վրայ : Զուտ ազգայնական կուսակցութիւնները, մասնաւորապէս «Իթթի-Փաքը Միւսլիմիյէ» (Մահմետականներու Դաշնակցութիւն) պայքարի կազմ ու պատրաստ էին արդէն : Սոցիալ դեմոքրատներն ու սոցիալ բեւօլիւսիստներն ալ անջատուեցան Ռուսերէն եւ կազմակերպուեցան ազգային կուսակցութիւններու մէջ : Նոյնպէս աշխատաւորները կազմեցին ազգային արհեստակցական միութիւններ, իսկ զինուորները դադտնի ընկերութիւններ : (Տե՛ս Der Neue Orient, B. I. Heft 8-ի մէջ Շթօքօլմէն մասնաւոր թղթակցութիւնը “Von der Organisation des Russischen Islams nach dem Sturz des Zarismus”):

«Մահմ. Կեդր. Բիւրօն», յեղափոխութենէն առաջ տրուած որոշման համաձայն, 1|14 Մայիսին հրաւիրեց համառուական Մահմետական առաջին համագումարը (Յեղափոխութենէն հաշուելով) Մոսկուայի մէջ : Ութը հարիւր հոգի ներկայ էին այս համագումարին :

\* ) Մոսկուայի մէջ ալ նոյն ատեն կազմուեցաւ «Մահմետական ժողովուրդներու Կոմիտէն» : Այս մարմինը սկսաւ հրատարակել մեծ օրաթերթ մը «Իլ» (Հայրենիք) անունով, թաթարերէն լեզուով եւ խմբագրութեամբ ծանօթ դրող Այազ Իսհաքովի : «Մահմետական Կոմիտէն» բողոքեց Ռուսաստանի ներքին թէ արտաքին քաղաքականութեան դէմ յանուն իսլամ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքին :

Այս համագումարին մէջ իրար բաղխեցան երկու հոսանքներ. սոցիալ դեմոկրատականը, որ կը կանգնէր ոչ միայն մի եւ անբաժանելի, այլ եւ կեդրոնացեալ կառավարութեամբ Ռուսաստանի սկզբունքին վրայ, եւ ազգայնական-համաթուրանականը, միշտ զարդարուած ընկերվարական նախադասութիւններով, որ կը պահանջէր Ռուսաստանի ապակեդրոնացումը ազգային-հողային հիմի վրայ եւ քրքական ժողովուրդներու միութիւնը «ազգային-կուլտուրական» մեծ դաշնակցութեան մը մէջ : Այն բոլոր թուրանական ժողովուրդները, որ սահմանաւոր հայրենիք մը կամ առ հասարակ պետութիւն կազմելու դիւրութիւններ ունին, պէտք է անկախանան, յետոյ իրրեւ ազատ, երկրային պետութիւններ, դաշնակցային կապով միանալու Ռուսերուն եւ հիմնելու նոր կայսրութիւն մը :

Առաջին տեսակէտին ներկայացուցիչն էր Ահմէդ Բէյ Յալիկովը, որ այսօր ալ հաշտեցուցած է համախառնութիւնը համայնավարութեան հետ եւ կը դործակցի բուլշեւիկներուն հետ : Երկրորդ տեսակէտին ջատագովն էր մեզի ծանօթ Ազրբէյջանի փանթուրանիստը՝ Մէհմէդ Բէյ Բասուլգադէ :

Ուշագրաւ էր սակայն, որ թուրք սոցիալ-դեմոկրատն ու ազգայնական-դեմոկրատը համամիտ էին մէկ բանի մէջ. ա՛յն, թէ Ռուսաստանի բոլոր թուրանական ժողովուրդները, զորս մէկը թուրք միւսը իսլամ կը կոչէր, մէկ «ազգ» են, եւ իրենց գերագոյն նպատակը պէտք է ըլլայ անո՛նց միութիւնը : Երկուքն ալ կը պահանջէին այդ ժողովուրդներու կազմակերպումը մէկ կեդրոնական մարմնի մէջ :

Կը թուի որ Յալիկով, թունդ համախառնական, կը վախնայ, թէ մահմետական ժողովուրդներու թերթիթօրեալ ինքնավարութիւնը, զօրացնելով անոնցմէ ամէն մէկի տեղական-ազգային ինքնուրոյնութիւնը կը վնասէ ընդհանուր միութեան գործին : Վերջապէս Յալիկով, ծագումով օս, քիչ հետաքրքրուած էր զուտ թրքական միութեան իդէալով. ինք կը բաղձար ոչ միայն թուրք, այլ աշխարհի բոլոր մահմետականներուն միութեան. թող ան իրագործուի Ռուսաստանի օգնութեամբ եւ ըլլայ, ի սկզբան, անոր մականին տակ, փոյթ չէ :